# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/3

ք. Երևան <<21>> փետրվարի 2019 թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Փայլքե ՍՊԸ»-ն, ի դեմս տնօրեն Հ. Խանաղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է բնակտարածությունների մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի .Էլեկտրոնային գնումներե բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի .Օրենսդրությունե բաժնի .Ֆինանսների նախարարի հրամաններե ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 134 521 200(մեկ հարյուր երեսունչորս միլիոն հինգ հարյուր քսանմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[1] Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս

են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[3]

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե<br>ք. Երևան, Մ. Խորենացի 3,7<br>ՀՎՀՀ 02647057<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900013202016, Հ/Հ900013574018<br>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար | <<ՓԱՅԼՔ>> ՍՊԸ<br>ՀՀ Լոռու.մ.ք.Տաշիր Գրիբոյեդովի 14<br>ՀՎՀՀ 06948686<br>ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլբանկ ՓԲԸ<br>h/h 220143330235000<br>տնօրեն Հրայր Խանդոյան |
| Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. | (ստորագրություն)<br>Կ.Տ. |

*[3] Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
.01 է փետրվարի 2019թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Մատուցման | |
| | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 90911100/503 | Բնակտարածությունների մաքրման ծառայություններ: Կատարողը պարտավոր է ( ՀՀ ՊԵԿ Յուսիսային մաքսատուն-Վարչության Բավրայի մաքսային կետ-բաժին)<br>1.Կատարել տարածքի մաքրում՝ ավլել, ջրել, գազոնը հնձել, մայթերը մաքրել:<br>2. Մեքենայացված մաքրում՝ հատուկ ավլող մեքենայի միջոցով, երթևեկելի մասի ամբողջ լայնությամբ աղբը հավաքելով՝ հետագայում ձեռքով կուտակավորելու և տեղափոխելու համար՝ 37 050քմ:<br>3.Աղբահանության կազմակերպում տարածքից՝ ամռանը շաբաթական առնվազն 5 անգամ, ձմռանը՝ առնվազն 4:<br>4. Աղբարկղների տրամադրում անվերադարձ՝ 10 հատ մեծ /առնվազն 900լ./ մետաղյա, 20 հատ փոքր /առնվազն 40լ/, աղբամանի նկարը կցվում է:<br>Յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից 1.5-5մ տարածքը: Աղբարկղերը ամիսը մեկ անգամ ախտահանել հատուկ նյութերով: Ինքնաթափ մեքենաներով աղբի տեղափոխումն իրականացնելու ժամանակ մեքենաները պարտադիր պետք է ծածկոցներով ծածկված լինեն:<br>5. Կատարել մաքրում՝ փոշու, աղբի ու թափոնների հավաքման, աղբանների մեջ տեղավորման այնուհետև աղբավայր տեղափոխման աշխատանքներ մեքենաների սկանավորման համար նախատեսված անգարներում:<br>6. Ձյուն գալու դեպքում՝<br>Կատարել ձնամաքրման և ձնահեռացման աշխատանքներ՝ մեքենայացված, ձյունը մաքրելով ամբողջական:<br>Ձյունից մաքրված տարածքներում ավազ և աղ շաղ տալ 37 050 քմ-ի վրա /բանուկ մաս/:<br>7. Վերացնել մայթեզրերի մոլախոտերը թունանյութերի միջոցով, ամիսը մեկ հատուկ նյութերի միջոցով ախտահանել աղբամանները, խնամել և միաժամանակ տնկել բազմամյա ծաղիկներ՝պատվիրատուի պահանջով, խնամել խոտածածկը (ընդհանուր մակերեսը 5 100 քմ):<br>8. Կատարողը պարտավոր է ծառայությունը մատուցելու համար ունենա հետևյալ սարքավորումները՝ | դրամ | 37 824 000 | 1 | ՀՀ ՊԵԿ Յուսիսային մաքսատուն -Վարչության Բավրայի մաքսային կետ-բաժին | Մատակարարումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2019թ. Դեկտեմբերի 15-ը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Աղբատար մեքենա - 2 հատ<br>Փողոցի փոշեկուլ- 2 հատ<br>Ավլող-լվացող մեքենա -2 հատ<br>Ձեռքի խոտհնձիչ -2 հատ<br>Այգու խոտհնձիչ -2 հատ<br>Թունանյութեր ցանելու/փոշիացնող/ սարք - 2 հատ<br>Ընդհանուր մակերեսը՝<br>Բավրա – 42 150քմ | | | | | |
| | 90911100/504 | Բնակտարածությունների մաքրման ծառայություններ: Կատարողը պարտավոր է ( Արևելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժին)<br>1.Կատարել տարածքի մաքրում՝ ավլել, ջրել, գազոնը հնձել, մայթերը մաքրել:<br>2. Մեքենայացված մաքրում՝ հատուկ ավլող մեքենայի միջոցով, երթևեկելի մասի ամբողջ լայնությամբ աղբը հավաքելով՝ հետագայում ձեռքով կուտակավորելու և տեղափոխելու համար 39 250 քմ :<br>3.Աղբահանության կազմակերպում տարածքից՝ ամռանը շաբաթական առնվազն 5 անգամ, ձմռանը՝ առնվազն 4:<br>4. Աղբարկղների տրամադրում անվերադարձ `10 հատ մեծ /առնվազն 900լ./ մետաղյա, 20 հատ փոքր /առնվազն 40լ/, աղբամանի նկարը կցվում է:<br>Յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից 1.5-5մ տարածքը: Աղբարկղերը ամիսը մեկ անգամ ախտահանել հատուկ նյութերով: Ինքնաթափ մեքենաներով աղբի տեղափոխումը իրականացնելու ժամանակ մեքենաները պարտադիր պետք է ծածկոցներով ծածկված լինեն:<br>5.Կատարել մաքրում՝ փոշու, աղբի ու թափոնների հավաքման, աղբամանների մեջ տեղավորման այնուհետև աղբավայր տեղափոխման աշխատանքներ մեքենաների սկանավորման համար նախատեսված անգարներում:<br>6. Ձյուն գալու դեպքում<br>Կատարել ձնմաքրման և ձնահեռացման աշխատանքներ՝ մեքենայացված, ձյունը մաքրելով ամբողջական:<br>Ձյունից մաքրված տարածքներում ավազ և աղ շաղ տալ 39 250 քմ-ի վրա /քանուկ մաս/:<br>7. Վերացնել մայթեզրերի մոլախոտերը թունանյութերի միջոցով, ամիսը մեկ հատուկ նյութերի միջոցով ախտահանել աղբամանները, խնամել և միաժամանակ տնկել բազմամյա ծաղիկներ՝պատվիրատուի պահանջով, խնամել խոտածածկը (ընդհանուր մակերեսը 7 760 քմ):<br>8. Կատարողը պարտավոր է ծառայությունը մատուցելու համար ունենա հետևյալ սարքավորումները՝<br>Աղբատար մեքենա - 2 հատ<br>Փողոցի փոշեկուլ- 2 հատ<br>Ավլող-լվացող մեքենա -2 հատ<br>Ձեռքի խոտհնձիչ -2 հատ<br>Այգու խոտհնձիչ -2 հատ<br>Թունանյութեր ցանելու/փոշիացնող/ սարք - 2 հատ<br>Ընդհանուր մակերեսը՝<br>Բագրատաշեն – 47 010 քմ | դրամ | 35 400 000 | 1 | ՀՀ ՊԵԿ Արևելյան մաքսատուն -վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժին | Մատակարարումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2019թ. Դեկտեմբերի 15-ը |
| | 90911100/505 | Բնակտարածությունների մաքրման ծառայություններ: Կատարողը պարտավոր է (ՀՀ ՊԵԿ Արևելյան մաքսատուն-վարչության Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային | դրամ | 19 609 200 | 1 | ՀՀ ՊԵԿ | Մատակարարումն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | կետ-բաժին)<br>1. Կատարել տարածքի մաքրում՝ ավլել, ջրել, գազոնը հնձել, մայթերը մաքրել:<br>2. Մեքենայացված մաքրում՝ հատուկ ավլող մեքենայի միջոցով, երթևեկելի մասի ամբողջ լայնությամբ աղբը հավաքելով՝ հետագայում ձեռքով կուտակավորելու և տեղափոխելու համար 15 020 քմ:<br>3.Աղբահանության կազմակերպում տարածքից՝ ամռանը շաբաթական առնվազն 5 անգամ, ձմռանը՝ առնվազն 4:<br>4. Աղբարկղների տրամադրում անվերադարձ ՝ 10 հատ մեծ /առնվազն 900լ./ մետաղյա, 20 հատ փոքր /առնվազն 40լ/, աղբամանի նկարը կցվում է:<br>Յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից 1.5-5մ տարածքը: Աղբարկղերը ամիսը մեկ անգամ ախտահանել հատուկ նյութերով: Ինքնաթափ մեքենաներով աղբի տեղափոխումը իրականացնելու ժամանակ մեքենաները պարտադիր պետք է ծածկոցներով ծածկված լինեն:<br>5.Կատարել մաքրում՝ փոշու, աղբի ու թափոնների հավաքման, աղբանների մեջ տեղավորման այնուհետև աղբավայր տեղափոխման աշխատանքներ մեքենաների սկանավորման համար նախատեսված անգարներում:<br>6. Ձյուն գալու դեպքում՝<br>Կատարել ձնմաքրման և ձնահեռացման աշխատանքներ՝ մեքենայացված, ձյունը մաքրելով ամբողջական:<br>Ձյունից մաքրված տարածքներում ավազ և աղ շաղ տալ 15 020 քմ-ի վրա /բանուկ մաս/:<br>7. Վերացնել մայթեզրերի մոլախոտերը թունանյութերի միջոցով, ամիսը մեկ հատուկ նյութերի միջոցով ախտահանել աղբամանները, խնամել և միաժամանակ տնկել բազմամյա ծաղիկներ՝պատվիրատուի պահանջով, խնամել խոտածածկը (ընդհանուր մակերեսը 1 700 քմ)<br>8. Մաքսակետի "Ելքի"-ի հատվածում կատարել ժայռերից քարաթափման հետևանքով առաջացած քարերի կույտի ժամանակին հավաքման և աղբավայր տեղափոխման աշխատանքները՝ չխոչընդոտելով երթևեկությանը և բնականոն աշխատանքին:<br>9.Կատարողը պարտավոր է ծառայությունը մատուցելու համար ունենա հետևյալ սարքավորումները՝<br>Աղբատար մեքենա 1 հատ<br>Փողոցի փոշեկուլ- 1 հատ<br>Ավլող-լվացող մեքենա -1 հատ<br>Ձեռքի խոտհնձիչ -1 հատ<br>Այգու խոտհնձիչ -1 հատ<br>Թունանյութեր ցանելու/փոշիացնող/ սարք - 1 հատ<br>Ընդհանուր մակերեսը՝<br>Գոգավան-16 720 քմ | | | | Արևելյան մաքսատուն-վարչության Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային կետ-բաժին | իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագրին ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2019թ. Դեկտեմբերի 15-ը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 90911100/506 | Բնակտարածությունների մաքրման ծառայություններ. Կատարողը պարտավոր է.( ՀՀ ՊԵԿ Հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ)<br>1. Կատարել տարածքի մաքրում՝ ավլել, ջրել գազոնը հնձել, մայթերը մաքրել:<br>2. Մեքենայացված մաքրում՝ հատուկ ավլող մեքենայի միջոցով, երթևեկելի մասի ամբողջ լայնությամբ աղբը հավաքելով՝ հետագայում ձեռքով կուտակավորելու և տեղափոխելու համար 24 000 քմ:<br>3.Աղբահանության կազմակերպում տարածքից՝ ամռանը շաբաթական առնվազն 5 անգամ, ձմռանը՝ առնվազն 4:<br>4. Աղբարկղների տրամադրում անվերադարձ ՝ 20 հատ մեծ /առնվազն 900լ./ մետաղյա, 40 հատ փոքր /առնվազն 40լ/,աղբամանի նկարը կցվում է:<br>Յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից 1.5-5մ տարածքը: Աղբարկղերը ամիսը մեկ անգամ ախտահանել հատուկ նյութերով: Ինքնաթափ մեքենաներով աղբի տեղափոխումը իրականացնելու ժամանակ մեքենաները պարտադիր պետք է ծածկոցներով ծածկված լինեն:<br>5. Կատարել մաքրում՝ փոշու, աղբի ու թափոնների հավաքման, աղբանների մեջ տեղավորման այնուհետև աղբավայր տեղափոխման աշխատանքներ մեքենաների սկանավորման համար նախատեսված անգարներում:<br>6. Ձյուն գալու դեպքում՝<br>Կատարել ձնմաքրման և ձնահեռացման աշխատանքներ՝ մեքենայացված, ձյունը մաքրելով ամբողջական:<br>Ձյունից մաքրված տարածքներում ավազ և աղ շաղ տալ 24 000 քմ-ի վրա /բանուկ մաս/:<br>7. Վերացնել մայթեզրերի մոլախոտերը թունանյութերի միջոցով, ամիսը մեկ հատուկ նյութերի միջոցով ախտահանել աղբամանները, խնամել և միաժամանակ տնկել բազմամյա ծաղիկներ՝պատվիրատուի պահանջով, խնամել խոտածածկը (ընդհանուր մակերեսը 2 400 քմ)<br>8.Կատարողը պարտավոր է ծառայությունը մատուցելու համար ունենա հետևյալ սարքավորումները՝<br>Աղբատար մեքենա - 2 հատ<br>Փողոցի փոշեկուլ- 2 հատ<br>Ավլող-լվացող մեքենա -2 հատ<br>Ձեռքի խոտհնձիչ -2 հատ<br>Այգու խոտհնձիչ -2 հատ<br>Թունանյութեր ցանելու/փոշիացնող/ սարք - 2 հատ<br>Ընդհանուր մակերեսը՝<br>Մեղրի-26 400 քմ | դրամ | 29 700 000 | 1 | ՀՀ ՊԵԿ Հարավային մաքսատուն -վարչության Մեղրիի մաքսային կետ | Մատակարարումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2019թ. Դեկտեմբերի 15-ը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 90911100/507 | Բնակտարածությունների մաքրման ծառայություններ: Կատարողը պարտավոր է. (ՀՀ ՊԵԿ Արարատյան մաքսատուն-վարչություն)<br>1. Կատարել տարածքի մաքրում՝ ավլել, ջրել:<br>2. Մեքենայացված մաքրում՝ հատուկ ավլող մեքենայի միջոցով, երթևեկելի մասի ամբողջ լայնությամբ աղբը հավաքելով՝ հետագայում ձեռքով կուտակավորելու և տեղափոխելու համար 3500քմ:<br>3.Աղբահանության կազմակերպում տարածքից՝ ամռանը շաբաթական առնվազն 4 անգամ, ձմռանը՝ առնվազն 3:<br>4. Աղբարկղների տրամադրում անվերադարձ՝ 10 հատ մեծ /առնվազն 900լ/ մետալյա, 20 հատ փոքր /առնվազն 40լ/, աղբամանի նկարը կցվում է:<br>Յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից 1.5-5մ տարածքը: Աղբարկղերը ամիսը մեկ անգամ ախտահանել հատուկ նյութերով: Ինքնաթափ մեքենաներով աղբի տեղափոխումը իրականացնելու ժամանակ մեքենաները պարտադիր պետք է ծածկոցներով ծածկված լինեն:<br>6. Կատարել մաքրում՝ փոշու, աղբի ու թափոնների հավաքման, աղբանների մեջ տեղավորման այնուհետև աղբավայր տեղափոխման աշխատանքներ մեքենաների սկանավորման համար նախատեսված անգարներում:<br>Կատարողը պարտավոր է ծառայությունը մատուցելու համար ունենա հետևյալ սարքավորումները՝<br>Աղբատար մեքենա - 1 հատ<br>Փողոցի փոշեկուլ- 1 հատ<br>Ավլող-լվացող մեքենա -1 հատ<br>Ձեռքի խոտհնձիչ -1 հատ<br>Այգու խոտհնձիչ -1 հատ<br>Թունանյութեր ցանելու/փոշիացնող/ սարք - 1 հատ<br>Ընդհանուր մակերեսը՝<br>Ավտոմաքսատուն 3500քմ | դրամ | 11 988 000 | 1 | ՀՀ ՊԵԿ Արարատյան մաքսատուն - վարչություն | Մատակարարումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2019թ. Դեկտեմբերի 15-ը |

*...ության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*
*...այնանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա այունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի ...վող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*
*...րողը պարտավոր է Մաքրման աշխատանքների այնպիսի կազմակերպում, որ ցանկացած պահի ապահովի տարածքի պատշաճ մաքրությունը և կոմիտեի աշխատակիցների անխափան գործունեությունը: ...գործվող նյութերը և սարքավորումներն ամբողջությամբ ձեռք են բերվում կատարողի կողմից:*
*...րման աշխատանքների կազմակերպման ժամերը նախապես համաձայնեցվում են Պատվիրատուի հետ, ընդ որում կատարողը պարտավոր է ապահովել ցերեկային և գիշերային հերթապահություն: ...ահովել կոնտակտային անձի առկայությունը, որը հասանելի լինի յուրաքանչյուր օրացուցային օր՝ շուրջօրյա:*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե<br>ք. Երևան, Խորենացի 3,7<br>ՀՎՀՀ 02647057<br>ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011202019, 3/Հ 900013574018<br>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար<br>Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ<br>/ստորագրություն/ | <<ՓԱՅԼՔ>> ՍՊԸ<br>ՀՀ Լոռու մ.ք.Տաշիր Գրիբոյեդովի 14<br>ՀՎՀՀ 06948686<br>ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլբանկ ՓԲԸ<br>Հ/Հ 220143330235000<br>տնօրեն Հրայր Խանառյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Կ.Տ.

Հավելված N 2

21 է փետրվարի 2019թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 90911100/503 | Բնակտարածությունների մաքրման ծառայություններ | | | | | | | | | | | | | 37 824 000 |
| 2 | 90911100/504 | Բնակտարածությունների մաքրման ծառայություններ | | | | | | | | | | | | | 35 400 000 |
| 3 | 90911100/505 | Բնակտարածությունների մաքրման ծառայություններ | | | | | | | | | | | | | 19 609 200 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | |
| 4 | 90911100/506 | Բնակտարած ություններ‌ի մաքրման ծառայություններ | | | | | | | | | | | | | 29 700 000 |
| 5 | 90911100/507 | Բնակտարած ությունների մաքրման ծառայություններ | | | | | | | | | | | | | 11 988 000 |

խն ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ալկացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, Հ/Հ900013574018
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար

Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

<<ՓԱՅԼՔ>> ՍՊԸ
ՀՀ Լոռու մ.ք.Տաշիր Գրիբոյեդովի 14
ՀՎՀՀ 06948686
ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլբանկ ՓԲԸ
h/h 220143330235000

տնօրեն Հրայր Խանանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
21 ե փետրվարի 2019թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ՝
.ՓԱՅԼՔԵ ՍՊԸ
ՀՀ Լոռու մ.ք.Տաշիր Գրիբոյեդովի 14
ՀՎՀՀ 06948686
ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլբանկ ՓԲԸ
h/h 220143330235000

Պատվիրատու՝
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, Հ/Հ900013574018

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

. ե . ե 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ .____ե .__________________ե 20 թ.
Պայմանագրի համարը՝ ________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ . ե . ե 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
21 E փետրվարի 2019թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ______________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն